

Վ Ա Հ Ա Ն Թ Ո Յ Ի Կ Ց Ա Ն

Սույն թվականի հունիսի 14-ին, Կարսի հիվանդանոցում, 74 տարեկան հասակում վախճանվեց պուսահայ մամուլի բազմավաստակ և լավագույն ներկայացուցիչներից մեկը՝ «Նոր լուր»ի խմբագրապետ Վահան Սարգսի Թռչիկյանը։ Նա արևմտահայ հայտնի բանասեր-գրականագետ Թորոս Աղատյանի հետ գալիս էր Էջմիածին՝ մասնակցելու երջանկահիշատակ Գեորգ Զ. Կաթողիկոսի թաղման արարողություններին, սակայն ճանապարհին, անակնկալ, վախճանվում է Կարսի թյուրքական հիվանդանոցում։ Հանգուցյալի խնդրանքի համաձայն, նրա մարմինը փոխադրվում է Կոստանդնուպոլիս և մեծ հանդիսավորությամբ թաղվում Եիշիի հայոց գերեզմանատանը։ Ըստ մամուլում եղած տեղեկությունների, թաղման արարողություններին նախագահել է գերաշնորհ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Կարապետյանը։

Վահան Թռչիկյանը ծնվել է 1880 թվականին Կոստանդնուպոլսում, Գնալը կղզում (Մարմարայի Իշխանաց կղզիներից մեկը)։ Նախնական կրթությունը նա ստանում է նույն կղզու հայոց դպրոցում, ապա շարունակում Սկյուտարի Բերբերյան գիշերօթիկ դպրոցում, որն ավարտելուց հետո նվիրվում է գրական հրապարակախոսական աշխատանքների։ Գրքի կամ մամուլի աշխատանքը Սփյուռքում կապված է զբոսայգի, առաքյանքի, անգամ՝ քաղցի ու հալածանքի հետ։ Այդ ամենը, անտրտուն, հանձն է առնում ողբացյալ Վահան Թռչիկյանը և պատվով կատարում մինչև իր կյանքի վերջին օրերը։



Թռչիկյանը 52 տարի անընդհատ աշխատակցում է «Մանգումլի էֆեսա», «Նոր կենեֆ», «Ժամանակ», «Վերջին լուր» թերթերին և «Լոյս» շաբաթաթերթին։ 1907—1909 թվականներին հրավիրվելով Զմյուռնիա, նա ստանձնում է նախ «Արշալոյս», և ապա «Արձագանք» թերթերի խմբագրապետությունը։ Հետագայում, վերագառնալով Կոստանդնուպոլիս, նա մինչև 1922 թվականը աշխատակցում է «Ժամանակ» և «Վերջին լուր» թերթերին։ 1922 թվականին նա հիմնում է «Նոր լուր»-ը և 32 տարի շարունակ, մեծ համբերությամբ և սիրով, շարունակում այն մինչև իր ողբերգական մահը։ Իր այս դժվարին աշխատանքում նրան միշտ օգ-

նելիս է եղել իր կյանքի ընկերը՝ գրականագետ տիկին Հայկանուշ Մառքը։ Թռչիկյանը, լավ ըմբռնելով հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու շահերը, միշտ պաշտպանել է Հայ Եկեղեցու միասնականությունը՝ Մայր Աթոռ Էջմիածնի գլխավորությամբ։ Նա իր խմբագրած թերթում անողոք պայքար է մղել հանուն Հայ Եկեղեցու դարավոր իրավունքների, Ազգային Սահմանադրության և Էջմիածնի ավանդական ու նվիրական շահերի։ Թռչիկյանը անհունորեն սիրում էր Էջմիածինը, Հայ Եկեղեցին և իր հայրենի երկիրը։

Մեղք, որ նա չտեսավ Էջմիածինը, չտեսավ Լուսավորչի նվիրական Գահը և այն հողը, որին տենչում էր, որի կարոտով ու պապակով տոշորվում էր երկա՛ր, երկա՛ր տարիներ։

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը երբե՛ք չի մոռանա իր եկեղեցասեր և հայրենասեր ազնիվ որդու հիշատակը։

